ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 6, 1957 Общественные науки

Հր. Բարթիկյան

ՊԱՎԼԻԿՅԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՄԻ ՔԱՆԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՇՈՒՐՋԸ

Այս հոդվածում մենք կանդ ենք առնում պավլիկյան շարժման ուսումնասիրության մի քանի հայկական սկզբնաղբյուրների վրա: Նրանցից մի մասը բոլորովին անտեսվել է հայագետների կողմից, մյուսներն էլ սխալմամբ առնչվել են պավլիկյան աղանդավորների հետ, որի հիման վրա արվել են սխալ ենթադրություններ և եզրակացություններ:

1900 թ. Կարապետ Տեր-Մկրտչյանը «Արարատ» ամսագրում հրատարակեց Դվինի 554 թ. եկեղեցական ժողովի բանաձևը, որը վերնագրված է «Ուղիղ միաբանութեան Հայոց աշխարհիս»: Այդ ժողովը գումարվել էր Ներսես Բ. Բագրևանդցի կաթողիկոսի կողմից՝ աղանդավոր նեստորականների դեմ միջոցառումներ մշակելու համար: Տարբեր մեղադրանքների կողքին հայ հոգևորականությունը իր այդ բանաձևում մեղադրում էր նեստորականներին նաև այն բանի համար, որ մարդիկ սկսել էին հաղորդություն ընդունել նրանց ձեռքից «որպես յուխաէ նուիրաց պաւղիկեանց»[1]:

Փաստաթղթի հրատարակիչն ահա այդ համարեց պավլիկյան աղանդավորների առաջին հիշատակությունը: Պարզ է, որ դրանից հետո, Հովհան Օձնեցու «Ընդդէմ պաւղիկեանց» ճառի մեջ հիշատակված կաթողիկոս Ներսեսին նա պետք է նույնացներ այս Ներսես Բ. Բագրևանդցի կաթողիկոսի՝ Դվինի 554 թ. ժողովի կազմակերպողի հետ:

Կարապետ Տեր-Մկրտչյանի ենթադրությունը ընդունվել է Ստ. Մելիք-Բախշյանի[2] և գրեթե բոլոր այն ուսումնասիրողների կողմից, որոնք անդրադարձել են պավլիկյանների պատմությանը[3]:

---

[1] Կ. Տեր-Մկրտչյան, *Պաւղիկեանց և թոնդրակեցւոց աղանդները արդի քննադատութեամբ, «Արարատ», 1900 թ., հուլիս, էջ 333: Վերահրատարակվել է «Գիրք Թղթոց» ժողովածուում, Թիֆլիս, 1901, էջ 73: Վերջինում մեզ հետաքրքրող բառը «պաւղիկեանց» ձևով է հրատարակված: Կ. Տեր-Մկրտչյանի «պաւղիկեանց» ձևը ըստ երևույթին չի համապատասխանում ձեռագրում եղածին:*

[2] Ստ. Մելիք-Բաշխյան, *Պավլիկյան շարժումը Հայաստանում, Երևան, 1953, էջ 132:*

[3] *К. Н. Юзбашян.* К истории павликианского движения в Византии в IX в. „Вопросы истории религии и атеизма", т. 4, 1956, стр. 254, *Նույնի՝* Тондракитское движение в Армении и павликиане, *«Տեղեկագիր», 1956, № 9, էջ 44:* Ս. Պողոսյան, *Գյուղացիների ճորտացումը և գյուղացիական շարժումները Հայաստանում 9—13-րդ դդ., Երևան, 1956 թ., էջ 355,* Հ. Թարխանյան, *Հայ փիլիսոփայական մտքի պատմություն, Երևան, 1956 թ., հատ. Ա., էջ 459: Պետք է ասել, որ դեռևս 1944 թվականին Ս. Տեր-Ներսեսյանը հենվելով Կ. Տեր-Մկրտչյանի հայտնի աշխատության վրա* (Die Paulikianer im Byzantinischen Keiserreiche) *ընդունում էր վերջինիս ենթադրությունը այն մասին, որ Օձնեցու մոտ հիշատակված կաթողիկոս Ներսեսը, Ներսես Բ. Բագրևանդցին էր: Տե՛ս S. Der-Nersessian.* Une apologie des images du septième siecle, Byzantion, t. XVII, *1944—1945,* p. *70—71:*

Կ. Տեր-Մկրտչյանի կողմից հրատարակված փաստաթղթի մեջ պավլիկյանների հիշատակության մասին կարծիքը պաշտպանողները պատասխան չեն տալիս արդարացիորեն առաջացող հարցին։ Ինչպե՞ս կարելի է պավլիկյան համարել այն մարդկանց, որոնք ընդունում են հաղորդության խորհուրդը, թեկուզ որոշ չափով ձևափոխված։ Բացարձակապես բոլոր աղբյուրները պավլիկյանների մասին, որոնց տվյալները ոչ մի կասկածի ենթակա չեն, միաբերան հայտարարում են, որ պավլիկյանները չեն ընդունում, խորշում են հաղորդության խորհրդից[1]։

Եթե ընդունենք, որ «Ուլխտ»-ի մեջ իսկապես հիշատակվում են պավլիկյանները և որ վերջիններս Հայաստանում գոյություն են ունեցել 6-րդ դարի կեսերին, նույնիսկ այդ դարի սկզբներին, ինչպես ասում է Սա. Մելիք-Բախշյանը, մի կողմ թողած երևակայությունները պավլիկյանների գոյության մասին Հայաստանում նույնիկ 2-րդ դարում (Ֆ. Կոնիբիր), ապա Հովհան Օձնեցին, որ իր հայտնի ճառը գրել է դրանից հարյուր հիսուն — երկու հարյուր տարի անց, պետք է որ ավելի շատ բան իմանար պավլիկյանների մասին, ինչ որ իր ճառից այդ չի երևում[2]։ Աղանդավորները նույնպես պետք է, որ որևէ կերպ հիշատակվեին հայկական աղբյուրներում այդքան երկար ժամանակամիջոցում, սակայն այդպիսի փաստի հետ ևս մենք չենք հանդիպում[3]։ Բյուզանդական աղբյուրները, որոնք անկասկած շատ ավելի ընդարձակ և արժանահավատ տեղեկություններ են տալիս պավլիկյան շարժման սկզբնավորության մասին, քանի որ նրանց հեղինակները, ամենայն հավանականությամբ օգտվել են աղանդավորների կողմից ստեղծված գրականությունից, պավլիկյան շարժման սկիզբը համարում են 7-րդ դարի կեսերը։

Մի բան պարզ է, որ 554 թ. փաստաթղթում հիշատակված մարդիկ պավլիկյան աղանդավորներ չեն։ Քանի որ Դվինի ժողովի բանաձևը մեզ հասել է ոչ թե այդ ժամանակվա ձեռագրով, այլ ուշ շրջանի, պետք է ենթադրել, որ այնտեղ, ուր այժմ գտնվում է «պաւղիկենաց» բառը, մի ուրիշ բառ էր գտնվում, դրան շատ նման, իսկ ուշ գրիչը, որին ծանոթ էին միայն պավլիկյան աղանդավորները, և ոչ թե տվյալ փաստաթղթում հիշատակվածները, այդ անունը «ուղղել» է։ Այդ կարգի բազմաթիվ օրինակներ մենք կարող ենք բերել, սակայն կանգ առնենք միայն մեկի վրա, որը մեզ հնարավորություն կտա հասկանալու համար 6-րդ դարի կեսերի «պավլիկյաններին»։

---

[1] Վերոհիշյալ բոլոր պատմարանները ընդունում են այդ։

[2] Կ. Տեր-Մկրտչյան, Հովհան Օձնեցու անտեղյակությունը, որը նա համարում է անհամաձայնություն բյուզանդական աղբյուրների տվյալների հետ, բացատրում է նրանով, որ «Օձնեցու նկարագրած պավղիկյանները բոլորովին տարբեր ծագում են ունեցել (հունական աղբյուրներում հիշատակված պավլիկյաններից — Հ. Բ.) և ապա ժամանակի ընթացքում շփվել են այդ աղանդավորների հետ (բյուզանդական աղբյուրներում հիշատակված — Հ. Բ.) և նոցա հաղորդել իրենց անունը զուցե և հետզհետե փոխ են առել միմյանց ուսմունք և սովորություններ» (Տե՛ս «Արարատ», 1900 թ., հուլիս, էջ 328)։ Այլ կերպ նա չէր կարող բացատրել, որովհետև ըստ նրա՝ «պավղիկյան աղանդը Հայաստանում հառաջ են բերել Խուժաստանից եկած նեստորականները» (Նույն տեղում, էջ 332)։

[3] Չի կարելի համաձայնվել Սա. Մելիք-Բախշյանի այն կարծիքի հետ, թե պավլիկյանների մասին հիշատակությունների բացակայությունը 554 թվականից հետո խոսում է այն մասին, որ՝ «զուցե Դվինի ժողովից հետո պավլիկյանների նկատմամբ գործադրած խիստ հալածանքները առժամանակ ստիպել էին նրանց իրենց գոյությունը խիստ գաղտնի պահել» (հիշ. աշխ., էջ 150), եթե նկատի ունենանք, որ այդ «առժամանակը» տևել է 150—170 տարի։

Նիկիայի առաջին եկեղեցական ժողովը 325 թ. ընդունեց մի կանոն աղանդավոր պավլիանիստների՝ Անտիոքի եպիսկոպոս Պողոս Սամոսատցու հետևորդների դեմ։ Պողոս Սամոսատցին դատապարտվել է Անտիոքի եկեղեցական երեք ժողովների կողմից 264, 266 և 269 թթ., և նրա աղանդը, ինչպես քաջ հայտնի է, ոչ մի առնչություն չունի պավլիկյանների աղանդի հետ[1]։ Սակայն գրիչները ժամանակի ընթացքում մոռանալով պավլիանիստներին, սկսեցին նրանց անվան տակ հասկանալ պավլիկյաններին։ Դա շատ հավանական է և բացատրելի, քանի որ վերջիններս ժամանակով շատ ավելի մոտ էին կանգնած իրենց և պավլիկյանների շարժումը անհամեմատ ավելի հզոր էր և հայտնի բոլորին։ Այսպիսով, կանոնգրքերի ուշ ձեռագրերում Նիկիայի ժողովի պավլիանիստներին վերաբերող 19-րդ կանոնի վերնագիրը περὶ παυλιανιστῶν-ի փոխարեն արդեն հանդես է գալիս παυλικιανοί ձևով[2], այսինքն գրիչները կարծելով, որ այդ կանոնը իսկապես վերաբերում է պավլիկյաններին «ուղղելու» են այդ անունը։

12-րդ դարի հեղինակներ՝ Զոնարասն ու Վալսամոնը, ծանոթագրելով եկեղեցական կանոնները, ավելի լուրջ սխալներ են թույլ տվել մեղ հետաքրքրող կանոնի վերաբերյալ։ Նրանք երկուսն էլ միանգամայն ճիշտ կերպով Նիկայի ժողովի 19-րդ կանոնը վերնագրում են ինչպես հնում՝ περὶ παυλιανιστῶν։ Զոնարասը գրում է, թե այդ կանոնը հրամայում է «պավլիկյանների աղանդից տիեզերական եկեղեցու կողմը անցնողներին նորից մկրտել»[3] (τοὺς τῆς αἱρέσεως τῶν παυλικιανῶν προσερχομένους τῇ καθολικῇ ἐκκλησίᾳ ἀναβαπτίζεσθαι ὁ κανὼν προστάσσει), այսինքն խեղաթյուրելով աղանդավորների անվանումը, անփոփոխ է թողնում պավլիանիստներին վերաբերող կանոնը։

Վալսամոնն ավելի հեռու է գնում։ Նույն կանոնի վերաբերյալ նա գրում է, թե այն նկատի ունի «մանիքեցիներին, որոնք պավլիկյաններ վերանվանվեցին մանիքեցի մի կնոջ՝ Կալլինիկեի որդի ոմն Պողոս Սամոսատցու անունից...»։ Մի խոսքով, պատմում է պավլիկյանների ծագման մասին բյուզանդական առասպելը, որը վերցրել է կամ ուղղակի Գեորգ Վանականի[4] և կամ էլ Կեդրինոսի Ժամանակագրությունից[5]։

431 թ., այն օրերում երբ Եփեսոսում գումարվում էր 3-րդ տիեզերական ժողովը՝ ընդդեմ Նեստորիոսի, Կոնստանդնուպոլսի կղերը հանդես եկան վերջինիս դեմ մի ուղերձով, որի մեջ խոսվում էր այն մասին, թե Նեստորիոսը համակարծիք է հարյուր վաթսուն տարի առաջ եղծված Պողոս Սամոսատցուն։ Այդ ուղերձի մի կողմում արձանագրված էին Պողոս Սամոսատցու դրույթները, իսկ մյուսում՝ զուգահեռաբար բերված էին Նեստորիոսի դրույթները, որոնք, ըստ այդ ուղերձի հեղինակների, բառ առ բառ համընկնում էին իրար։ Ուղերձը ավարտվում էր հետևյալ նախադասությամբ. «Ահա,

---

[1] Պողոս Սամոսատցու գործը հրատարակվել է Mansi-ի կողմից։ Տե՛ս *Sacrorum* Conciliorum nova et amplisima collectio. Paris-Leipzig, 1901, t. I, col. 1031—1102.

[2] Տե՛ս *М. Красножен*, Синопсис церковных правил и история его образования. Византийский Временник, т. XVII, вып. 1—4, 1910, стр. 241.

[3] Կանոնները տե՛ս *Mansi*, t. II, col. 676—677. Զոնարասի և Վալսամոնի ծանոթագրությունները՝ Ῥάλη—Ποτλῆ-Σύνταγμα των θείων καὶ ἱερῶν κανόνων, Ἀθῆναι, 1853, τομ. Β', σελ. 159—160.

[4] *Georgii Monachi*, Chronicon, ed. C. de Boor, Lipsiae, 1904, p. 718.

[5] *Georgii Cedreni*, Synopsis historiorum, CSHB, Bonnae, 1839, t. I, p. 757.

Նեստորիոսը համաձայնվում է աղանդավոր Պողոս Սամոսատցու հետ[1] (Ὁ δὲ συναινεῖ (ὁ Νεστόριος) τῷ αἱρετικῷ Παύλῳ τῷ Σαμοσατέων), այսինքն Նեստորիոսը մեղադրվում էր Պողոս Սամոսատցու աղանդը վերակենդանացնելու փորձի մեջ: Այդ բոլորին ավելացնենք և այն, որ Նիկիայի ժողովում պավլիանիստների դեմ ընդունված որոշումները Եփեսոսի 431 թվականի ժողովը տարածում էր նաև նեստորականների վրա[2]:

Ասվածից հետո չի կարելի կասկածել այն բանում, որ 554 թ. Դվինի ժողովը նեստորականներին մեղադրում էր ոչ թե պավլիկյանության մեջ, ինչպես հասկացել է «Ուխտ»-ի ուշ գրիչը, իսկ մեր ժամանակներում նաև Կ. Տեր-Մկրտչյանը, Ստ. Մելիք-Բախշյանը, Կ. Յուզբաշյանը, Ս. Պողոսյանը, Հ. Բաբրիելյանը և ուրիշներ, այլ պավլիանիստության մեջ, այսինքն Անտիոքի եպիսկոպոս և աղանդապետ Պողոս Սամոսատցու աղանդի մեջ:

Այսպիսով «Ուխտ միաբանութեան Հայոց աշխարհիս» վերնագիրը կրող փաստաթուղթը, որի վկայությունը համարվում էր պավլիկյաններին հիշատակող առաջին, հնագույն տեղեկությունը, ոչ մի առնչություն չունի մեր աղանդավորների հետ և պետք է վերջապես պավլիկյան շարժման ուսումնասիրության աղբյուրներից զանց առնվի:

Այժմ կանգ առնենք մի այլ աղբյուրի վրա, որը պավլիկյան շարժման ուսումնասիրողների ուշադրությունից վրիպել է: Խոսքը վերաբերում է 8-րդ դարի հեղինակ Ղևոնդ վարդապետի Հայոց Պատմությանը[3]:

8-րդ դարի կեսը արաբական խալիֆաթի համար սուր ճգնաժամի ժամանակաշրջան էր: 747 թ. Մերվում սկսվեց օմայանների դեմ ուղղված Աբու-Մուսլիմի ապստամբությունը, որի հետևանքը եղավ այդ հարստության տապալումը, և նոր՝ Աբբասյանների հարստության դլուխ գալը:

Արաբական խալիֆաթի ներքին դժվարությունները փորձեցին օգտագործել ոչ միայն Բյուզանդիան, այլև խալիֆաթի կողմից ստրկացված ժողովուրդները: 748 թ. Հայաստանում արաբական խալիֆաթի դեմ բարձրացավ խոշոր ապստամբություն, որը գլխավորում էր նախարար Գրիգոր Մամիկոնյանը: Ապստամբության կազմակերպման գործում, ամենայն հավանականությամբ, մասնակցել էր նաև Բյուզանդիան: Հայ ապստամբները, ինչպես վկայում է Ղևոնդը, ապաստանել էին Տայքի ամրություններում՝ «հանդերձ ամենայն ընտանեօք իւրեանց և ամենայն աղխիւք»: Նրանք հատկապես դիմում էին, շարունակում է պատմիչը, «ի զօրս արքային Յունաց որք էին ի կողմանս Պոնտոսի. քանզի էր ի մեջ նոցա ուխտ խաղաղութեան հրամանաւ կայսերն Կոնստանդնի»:

Այն ժամանակ, երբ հայոց զորքը գտնվում էր Պոնտոսում, նրան սկսեցին հարել այնպիսի մարդիկ, որոնց Ղևոնդն անվանում է «որդիք յանցանաց»: «Եւ ամենայն որդիք յանցանաց, — դրում է պատմիչը, — երթեալք խառնէին ի գունդ ապստամբութեանն, որք ոչ ճանաչէին զերկիւղն Աստուծոյ և ոչ զահ իշխանաց և ոչ զպատիւ ծերոց, այլ իբրև այլազգի և օտարացեալ ասպատակ սիրեալ գերէին զեղբարս և զազգակիցս իւրեանց, և բա-

[1] *Mansi*, t. III, col. 1009.

[2] Նույն տեղում, t. V, col. 176.

[3] Առաջին անգամ մենք այդ մասին անդրադարձել ենք մի փոքր հոդվածում: Տե՛ս *Р. Бартикян*, К вопросу о павликианском движении в первой половине VIII века. Византийский Временник, № 8, 1956.

զում աւարարութիւնս առնէին, խոշտանգանաւ և գանիւք տանջանս ածեալ ի վերայ եղբարց իւրեանց»[1]։

Ղևոնդի այս արժեքավոր տեղեկությունից կարելի է անել մի շարք կարևոր եզրակացություններ.

Նախ, «հանցանաց որդիների»-ի տակ պատմիչը նկատի է ունեցել հայերին, այլապես նա երբեք նրանց գործունեությունը չէր համեմատի «այլազգի» և «օտարացեալ» մարդկանց գործունեության հետ։ Բացի դրանից, նա «հանցանաց որդիների» գործունեության զոհերը համարում է իրենց եղբայրները։

Երկրորդ, պատմիչի ասելով, «հանցանաց որդիները» չունեին Աստծու երկյուղը։ Ղևոնդը, որպես հոգևորական, կարող էր այդպես անվանել միայն այն մարդկանց, որոնք չէին ենթարկվում պաշտոնական եկեղեցուն։

Երրորդ, ելնելով նրանից, որ «հանցանաց որդիները» «ոչ ճանաչէին ...զահ իշխանաց և ոչ զպատիւ ծերոց» կարելի է խոսել նրանց չենթարկվելու մասին աշխարհիկ իշխանությանը։ Հետևաբար այդ մարդիկ գտնվում էին օպոզիցիայի մեջ իշխանության հանդեպ։

Հայ իրականության մեջ 8-րդ դարի կեսերին արաբա-բյուզանդական սահմանի վրա ապրող այդպիսի մարդիկ ովքե՞ր կարող էին լինել։ Ովքե՞ր կարող էին լինել նրանք, որոնց Ղևոնդը բնութագրում է որպես ասպատակիչներ, խոշտանգողներ, իրենց եղբայրների չարչարողներ։ Պետրոս Սիկիլիացին այդ նույն ձևով է բնութագրում պավլիկյանների խոշորագույն աղանդապետ Սերգիոսին. «նա բազմաթիվ եղբայրների ու քույրերի միջև կաց ու կոիվ սերմանեց, և զրկելով նրանց իրենց ունեցվածքից, աքսորեց օտար երկրներ, որոնց լացն ու կոծը բարձրանում է մինչև երկինք...։ Նատերին նա սպանեց կապանքների մեջ և բանտերում, իսկ ուրիշներին էլ հարուստներից աղքատ դարձրեց»[2]։

Մեր ենթադրությունը, որ Ղևոնդի «որդիք յանցանաց» պավլիկյաններ են, զարմանալի ճշգրտությամբ հաստատվում է բյուզանդական աղբյուրներով։ Պետրոս Սիկիլիացին իր հայտնի Պավլիկյանների պատմության մեջ հիշատակում է, որ աղանդապետ Դեգնեսիոսի մահից հետո, որ տեղի ունեցավ Մանանաղում, նրա հաջորդները՝ Հովսեփ-Էպափրոդիտոսն ու Զաքարիան, Մանանաղի պավլիկյանների գլուխն անցած, փորձում են գաղտնի փախչել արաբական տիրապետության տակից, անցնել սահմանը և ապաստանել Պոնտոսում։ Պետրոս Սիկիլիացին նշում է նաև, որ արաբներն իմանալով այդ, հալածում են պավլիկյաններին, և սարսափելի կոտորածի ենթարկում Զաքարիային և նրա հետևորդներին։ Հազիվ հազ ազատվում է Հովսեփն իր հետևորդներով և անցնելով բյուզանդական սահմանը ապաստան է գտնում Էպիսպարիս բնակավայրում։ Աղանդապետ Դեգնեսիոսի մահվան պատճառը մեզ հայտնի է Պետրոս Սիկիլիացու պատմությունից։ Նա մահացել է ժանտախտից։ Բելգիացի բյուզանդագետ Ա. Գրեգուարը ցույց է տվել, որ Դեգնեսիոսը վախճանվել է 746—747 թթ. այդ համաճարակի տարածման ժամանակ[3], որի

---

[1] Ղևոնդեայ Մեծի վարդապետի Հայոց Պատմութիւն, Ս.-Պետերբուրգ, 1887, էջ 123։

[2] *Petri*, Siculi, col. 1293.

[3] *H. Grégoire*, Précisions geographiques et chronologiques sur les Pauliciens— Bulletin de l'Academie royale de Belgique, Classe des lettres, V, 33, 1947, p. 299.

մասին հիշատակում են բյուզանդական հեղինակներ՝ Թեոփանեան[1] ու պատրիարք Նիկեփորը[2]։

Պավլիկյանների փախուստը Մանանագից, հետևաբար, տեղի է ունեցել Թեոդոսիոսի մահվան հաջորդ տարին՝ 748 թ. (հայերի կողմից ապատամբության բարձրացման տարին), քանի որ այդ պավլիկյաններին չի կարելի չնայելնացնել մեր պատմիչի «հանդգնաց որդիներիս» հետ, որոնք «երթեալք խառնէին ի գունդ ապատամբութեանն», որը ինչպես նշեցինք դանվում էր ի կողմանս Պոնտոսիս։ Եպիսկոպոսը բնակվելը, որտեղ ապաստան են գտնում Հովսեփի կողմից դիտավորվող պավլիկյանները, գտնվում էր նույնպես Պոնտոսում։ Նրանք, ամենայն հավանականությամբ, ուզում էին մասնակից դառնալ այդ ապատամբության, միասին դուրս գալ արաբական խալիֆաթի լուծը թոթափելու համար, որն այն ժամանակ անչափ ծանրացել էր։

Պոնտոսի Եպիսկոպոսը բնակվելը բնակիչները փախստական պավլիկյաններին ջերմորեն են ընդունում։ «Նոյնը, — ասվում է Պետրոս Սիկիլիացու պատմության մեջ, — վասնզի ջահելով, մեծ պատվով դիմավորեցին նրան (Հովսեփին — Հ. Բ.) կարծես նա լիներ Աբրահամի աշակերտը»[3]։

Լեոնդը գրում էր, որ «հանդգնաց որդիներիս» ապատամբության գնդին միանալու հետևանքով, վերջինիս զեկավարների մոտ անհամաձայնություն է առաջանում ապատամբության հետագա ընթացքի հարցում։ «Յապացս որոշ— գրում է Լեոնդը, — սարջայեալ ներոգութիւնն Առաւուծոյ քակեաց զմիաբանութիւն նոցա. անցէն ի մասոյ մեկնեալ ի նոցանէն (ապատամբության կոմնակիցների մասից — Հ. Բ.) իշխան Աշոտ զայլ հաստատէր ի գլուխն Տարիանոյ ի գիւղն Հաղբ և ասանք ի նախարարացն ընդ նմա, և կամէր միաբանել ընդ որդիսն Բամպիսիոյ»[4]։

Նախարարների այդպիսի վերաբերմունքը դեպի ապատամբությունը մեծ շատ հասկանալի է։ Նրանց հիմնական նպատակը՝ դա քաղաքական ինքնուրույնություն ձեռք բերելն էր։ Նրանք չէին ուզում այդ պայքարին մասնակից դարձնել ժողովրդական լայն մասսաներին, ասավել ևս «հանդգնաց որդիներին» — պավլիկյաններին, որոնցից նրանք ավելի շատ էին վախենում, քան թե արաբներից, քանի որ առաջինների պայքարը անխուսափելիորեն աստանալու էր գասակարգային բնույթ, ուղղվելով հենց իրենց՝ նախարարների դեմ։ Ապատամբության սկզբնական առաջ, երբ դեռևս այդ հարցը քննարկվում էր նախարարների շրջանում, նրանց մի մասը դեմ էր ապատամբությանը։ Նրանք, իհարկե, միմիայն արաբներից չէր որ վախենում էին։ Հենց նախարար Աշոտը դեմ էր ապատամբության և դիմելով վերջինիս կոմնակիցներին ասում էր. — «Եթե կամեցիք ընդունել զիրատ իմ ոչ արասցուք զրանդ զայլ, և հարկեսցուք նոցա (արաբներին — Հ. Բ.) որպես զարդ ես, և կայցուք զատացուածս մեր, զայլոս, զանտառս և զանգատանս մերս»[5]։

«Հանդգնաց որդիներիս» մասին Լեոնդի տեղեկությունների ստեղծագործությունը թույլ չի տալիս պարզելու հայ նախարարների, հատկապես ապատամբության պարագլուխ Երիզոր Մամիկոնյանի, դիրքը այն մարդկանց

---

[1] Theophanis Chronographia, ed C. de Boor. p. 422—423.
[2] Nicephori archiepiscopi CP Opuscula historica, ed C. de Boor. p. 62—63.
[3] *Petri Sicull.* col. 1285.
[4] Լեոնդեայ Մեծի վարդապետի Հայոց Պատմութիւն, էջ 133։
[5] Նույն տեղում, էջ 133։

հանգեպ, որոնց պատճառ դարձան միաբանության խախտման։ Սակայն Պետրոս Սիկիլիացու Պատմությունը լրացնում է այդ բացը։ Այնտեղ ասված է, որ երբ պավլիկյանները Հովսեփ-Էպափրոդիտոսի գլխավորությամբ հասնում են Պոնտոսի Էպիսկոպոսին բնակավայրը, այդ մասին իմանալով «այլ սին բարեպաշտ արխոնտներից, որի անունն էր Գրիգորախես, բազմաթիվ զինվորներով շրջապատեց այն տունը, ուր ապաստան էր գտել Մանիի աշակերտը (Հովսեփը — Հ. Բ.)։ Երբ աշակերտներին նա ձերբակալեց, սակայն նա (Հովսեփը — Հ. Բ.) փախավ Փոլյոդիա և բնակվեց Պրոկոպիոսի Անտիոք քաղաքում»[1]։

«Բարեպաշտ արխոնտ Գրիգորախեսին» անձնավորության բացահայտման հարցով, ինչպես ինձ հայտնի է, զբաղվել է միայն Կարապետ Տեր-Մկրտչյանը, որը նրան սխալմամբ նույնացրել է Գրիգոր Մագիստրոս Պահլավունու հետ[2]։

Քանի որ այդ արխոնտի անունը Պետրոս Սիկիլիացու մոտ հնչում է ոչ թե Գրիգորախես ձևով, այլ Գրիգորախես, կարելի է ենթադրել, որ նա հայն չէ։ Ամենայն հավանականությամբ նա հույն է։ Արևմտահայերը, ինչպես հայտնի է, ձայնեզ բաղաձայնները խույլ են արտասանում, և հավանորեն «բարեպաշտ արխոնտ Գրիգորախեսը» հենց ինքը նախարար (ὄρχων) Գրիգոր Մամիկոնյանն է։ Պավլիկյանների դեմ վերջինիս հարձակումների մեջ չպետք է անտեսել Բյուզանդիայի քաղաքականության արտահայտությունը այդ ազանդավորների նկատմամբ։ Ընդհակառակը, Դրանում արտահայտվում է հայ տիրող դասակարգերի ատելությունը դեպի իրենց դասակարգային թշնամին։ Այն փաստը, որ Հովսեփը փախավ Պրոկոպիոսի Անտիոք քաղաքը, այսինքն Բյուզանդիա, և այնտեղ գտնվում էր մի քանի տարիներ, ինչպես նաև այն, որ մի քանի տարի անց՝ 752 թ. հայ ազանդավորները կամավոր կերպով անցնում են բյուզանդական կայսր կողմը, հաստատում է մեր ենթադրությունը, թե արխոնտ Գրիգորախեսը նրանց հանգեպ չէր տածում Բյուզանդիայի քաղաքականությունը։ Բյուզանդիան Սասանյանների հարատևության ժամանակաշրջանում նպատակահարմար գտավ ընդառաջ գալ պավլիկյանների նկատմամբ։

Լսենք ավելացնենք մեկ ցուցմունք.

Նախ, որ պավլիկյան շարժումը միայն սոցիալական շարժում չէր, այլ միաժամանակ ժողովրդա-ազգասիրական, ուղղված ոչ միայն Բյուզանդիայի, այլև արաբական խալիֆաթի դեմ։

Երկրորդ, մեկ պարզ դարձավ, թե ինչու արաբները 748 թ. հարձակում էին պավլիկյաններին և միաժամանակ վերջիններիս արաբական ագրեսիայի ակտիվ Բյուզանդիա փախչելու պատճառը։

Երրորդ, մենք իմացանք Հովսեփի կողմից գլխավորված պավլիկյանների Մանանալիսի Էպիսկոպոսին փախչելու, ինչպես նաև Հովսեփի Էպիսկոպոսից Պրոկոպի Անտիոք քաղաքը փախչելու ճշգրիտ թվականը։

Չորրորդ, հաստատվեց Ա. Գրիգորյանի ենթադրությունը ազանդապետ Իեզնեսիսի մահվան թվականի մասին։

---

[1] *Petri*, Siculi, col. 1286.

[2] Տես Die Paulikianer, հայ. թարգմ., էջ 197։ Պետրոս Սիկիլիացին իր պատմությունը գրել է 9-րդ դարի երկրորդ կեսում, այնպես որ նա չէր կարող խոսել 11-րդ դարի անձնավորության մասին։ Կ. Տեր-Մկրտչյանը այդպես է ենթադրում, որովհետև Պետրոս Սիկիլիացու գործը նա համարում է կոմնենոսների ժամանակաշրջանի կեղծիք։

Հինգերորդ, մի անգամ ևս հատատակից Եպիսկոպոսների անդգայությունը Պոնտոսում։

Վերջում կանգ առնենք նաև պավլիկյան շարժման պատմության կամ դպրոցաբանության ուսումնասիրության համար Մատենադարանի որոշ ձեռագրերի ունեցած կարևորության հարցի վրա, որ առաջին անգամ բարձրացրել է Ստ. Մելիք-Բախշյանը։

Վերջինս իր աշխատության մեջ նշում է, թե «պավլիկյան շարժման այս կամ այն հարցի վերաբերյալ բավականաչափ տեղեկություններ կան նաև Հայկ. ՍՍՌ Մինիստրների Սովետին կից Ձեռագրատանը (Մատենադարան) պահպանվող №№ 659, 687, 1217, 1425, 1495, 1850, 2019, 2245, 2252, 3488, 3681, ձեռագիր ժողովածուներում, որոնց մի մասը հրատարակել է Միսրանը «Գիրք հերձուածոց» վերնագրով «Արարատ»-ում 1892 թ.»։

Սակայն իրականում, նրա կողմից հիշատակված 14 ձեռագրից պավլիկյանների մասին տեղեկություններ կան միայն երեք ձեռագրերում №№, 659, 687 և 3681, իսկ Ստ. Մելիք-Բախշյանը նկատել է վերջիններիս միայն մեկի՝ № 659 ձեռագրի ավյալները։ Մնացած երկուսի տվյալները նա չի նկատել և օգտվել է այդ ձեռագրերից պավլիկյանների հետ առնչություն չունեցող հարցերի կապակցությամբ։ № 659 ձեռագրում (ընդօրինակված է 1368 թ). զետեղված է 5-րդ դարի հեղինակ Հովհան Մանդակունու «Կանոնն ապաշխարության» գրվածքը, ուր նշված է, թէ «պաւլիկեանց ապանդաւորների համար սահմանվում է ապաշխարության յոթնամյա ժամկետ (եր. 275բ.)։ Հովհան Մանդակունու վերոհիշյալ գրվածքը բովանդակող մնացած ձեռագրերում այդ հիշատակությանը մենք չենք հանդիպում։ Չի կարելի, իհարկե, մտածել, թե 5-րդ դարի հեղինակ Հովհան Մանդակունին կարող էր հիշատակել պավլիկյաններին։ Պարզ է, որ այդ նախադասությունը հետագայի ավելացում է։ Նույն այդ ձեռագրի գրիչը նշում է, թե ինքը «ծայրաքաղ (իմա՛ ծաղկաքաղ) է կատարել տարբեր ձեռագրերից և բազմաթիվ տեղեր նա ուրիշի մտքերը իր խոսքերով է շարադրում։

№№ 1217, 1425, 1850, 2019, 2245, 2252, 3488 ձեռագրերը բոլորը 17-րդ դարում են ընդօրինակված, բացի № 1217-ից, որը 18-րդ դարում է ընդօրինակված։ Ուրիշ գրությունների կողքին, նրանց մեջ զետեղված է նաև մի գրվածք, որը այդ ձեռագրերում տարբեր վերնագիր է կրում — «զիսան թէ քանի հերձուածոց լաշխարհս», «զիսան թէ քանի հերձուածոցքս», «զիսան թէ քանի հերձուածքս», «բովանդակ անուանք հերձուածոցաց», «հերձուածոցք երևելիքս զիսան դանագան կերպ հերձուածոցաց» և այլն, սակայն բովանդակությամբ բառացի համընկնում են իրար և նրանց մեջ պավլիկյանների մասին չկա բացարձակապես և ոչ մի խոսք։ Դա անկասկած Հովհան Դամասկացու Περὶ αἱρεσεων հայանի աշխատության թարգմանությունն է։

№ 1495 ձեռագիրը, որն իրենից ներկայացնում է մի բառարան, անկասկած արժեք է ներկայացնում լեզվաբանների համար, բայց ոչ երբեք պավլիկյան շարժումն ուսումնասիրող պատմաբանի, քանի որ այնտեղ պավլիկյան անունն անգամ հիշատակված չէ։

---

[1] Ս. Մելիք-Բախշյան, Պավլիկյան շարժումը Հայաստանում, Երևան, 1953, էջ 16։ Ճիշտն ասած Միսրանը 1892 թվականների «Արարատ»-ում հրատարակել է ոչ թե այդ ձեռագրերի մի մասը, այլ միայն մեկը՝ Էջմիածնի Մատենադարանի № 2005-ը, որի բովանդակությունը բառացի համընկնում է Մատենադարանի № 687 ձեռագրի բովանդակությանը։

Մեզ մնում է կանգ առնել Ս. Մելիք-Բախշյանի նշած երկու ձեռագրերի վրա էլ՝ №№ 3681 և 687։ Նրանց մեջ զետեղված է հերձվածներ թվարկող մի գրվածք, որը (ըստ երևույթին № 687 ձեռագրին) հրատարակել է Միսրանը «Երրք հերձուածոց» վերնագրի տակ։ Առաջին ձեռագիրը № 3681-ը Ս. Մելիք-Բախշյանի կողմից օգտագործվել է միայն բորբորիտների կապակցությամբ։ Այդ երկու գրվածքները, որոնց հետևելով մենք Միսրանին անվանում ենք «Երրք հերձվածոց» բովանդակությամբ հիմնականում համընկնում են։ № 3681-ի տեքստը (ընդօրինակված 1315 թ.) № 687-ի համեմատությամբ ունի տարբերություններ, որոնք ցույց են տալիս, որ վերջինիս տեքստը, որը 17-րդ դարի գրչի է պատկանում, որոշ չափով ապավաղված է։ Այս երկու «Երրք հերձվածոց»-ները թվարկում են հերձվածներ, ապրյուր ունենալով նույնպես Դամասկացուն, այն տարբերությամբ, որ Երրք հերձվածոցներում կա նաև ոչ թարգմանական մաս։ № 3681 ձեռագրի տեքստում նույնիսկ թվարկվում է Մալրագոմեցու աղանդը, որը բացակայում է հերձվածների մեջ ժողովածուներում, այդ թվում նաև № 687-ի։ Բայց քանի որ 3681 ձեռագիրը գտնվում է շատ վատ, դժվարընթեռնելի վիճակում, մենք ստիպված ենք կանգ առնել № 687 ձեռագրի տեքստի վրա։

Ստ. Մելիք-Բախշյանը, ուսումնասիրելով այդ ձեռագիրը, գտնում է, որ պավլիկյանները հիշատակված են 62-րդ հերձվածի տակ (նշված է ձեռագրի 385բ երեսում)։ Դա ըստ երևույթին նրա համար պավլիկյանների մասին իր կողմից նշված բոլոր ձեռագրերի ավյալներից ամենակարևորն է։ Նրա գրքի միակ նկարը վերարտադրում է № 687 ձեռագրի հենց այդ երեսը, իսկ հեղինակը ընդգծում է նրա կարևորությունը համարելով այն «մատենագրական մի արժեքավոր վկայություն, որի վրա մինչև այժմ ուշադրություն չեն դարձրել»։

Դեռևս «Երրք հերձուածոց»-ի հրատարակիչ Միսրանը նշում է, որ դա թարգմանական գործ է, և ենթադրում, թե այն պետք է թարգմանված լինի հերձվածների մասին Եպիփան Կիպրացու (4-րդ դար) հայտնի աշխատությունից[2]։ Միաժամանակ նա գրում է, որ Երրք հերձվածոց-ի մեջ ժամանակի ընթացքում եղել են հավելվածներ, որոնցից մի քանիսը բոլորովին ակներև են[3]։

Տեքստի ուսումնասիրությունը հաստատում է Միսրանի ենթադրությունը։ Իսկապես դա թարգմանական գործ է, սակայն ապրյուր ունի ոչ թե Եպիփանի, այլ՝ Հովհան Դամասկացու աշխատությունը (8-րդ դար), որի հեղինակը օգտվել է Եպիփանից։

687 ձեռագրի 385բ երեսի վրա, որի նկարը բերված է Ստ. Մելիք-Բախշյանի աշխատության մեջ, համատեղական նկարագրում են հերձվածներ, որոնք նույն հաջորդականությամբ և նույն բովանդակությամբ հիշատակված են Դամասկացու մոտ։ Այսպես.

---

[1] Ստ. Մելիք-Բախշյան, նշ. աշխ., էջ 214։

[2] Միսրան, հիշ. աշխ., էջ 91—92։

[3] Նույն տեղում, էջ 93։

Johannis Damasceni De haeresibus liber-Migne-Patr. gr. t. 94, col. 713–717.				Մատենադարանի № 687 ձեռագիր, էջ. 385բ. Միայն, հիշ. աշխ., էջ 102—103։			
հերձված	№	59	Καθαροί	հերձված	№	56	Կաթարիանոս
»	»	60	Ἀγγελικοί	»	»	57	Անկելիք
»	»	61	Ἀποστολικοί	»	»	58	Ապոստոլիկ
»	»	62	Σαββελιανοί	»	»	59	Սաբելիանոս
»	»	63	Ὠριγενιανοί	»	»	60	Որոգինեանիք
»	»	64	Ὠριγενιανοί ἄλλοι	»	»	61	Միւս Որոգինեանիք
»	»	65	Παυλιανισταί	»	»	62	Պաւղիանոս
»	»	66	Μανιχαῖοι	»	»	63	Մանիքեանիք

Ինչպես տեսնում ենք, նրանց, որոնք Սա. Մելիք-Բախշյանը համարում է պավլիկյաններ, ոչ այլ ոք են, քան պավլիանիստները — παυλιανισται, Անտիոքի եպիսկոպոս Պողոս Սամոսատցու հետևորդները, որոնց մասին վերևում մենք տեղի ունեցանք մանրամասն անդրադառնալ։

Պավլիանիստներին վերաբերող հատվածը Դամասկացու մոտ համառոտ է արված և նրան ամբողջությամբ համընկնում է հայերեն ձեռագրի 62-րդ հերձվածի առաջին կեսը։ Մենք խոսում ենք 62-րդ հերձվածի բովանդակության առաջին կեսի մասին, որովհետև նա ունի շարունակություն, որը ոչ մի կերպ չէր կարող հունական սկզբնաղբյուրներից առաջացած լինել։ Նա անկասկած զուտ հայկական ծագում ունի։ Այդ շարունակության ավյալները վերաբերում են զանազան ժամանակների և համանուն զանազան հերձվածների։ Այնտեղ նույնիսկ խոսք կա քաղկեդոնականների մասին։ Քաղկեդոնականներին է վերաբերում մեր ձեռագրի այն վկայությունը, թե պողիանոսք զի խորհուրդն ջուր խառնեն[1]։ 62-րդ հերձվածի հակաքաղկեդոնական ուղղությունը միայն խոսում է նրա շարունակության ոչ բյուզանդական ծագման մասին։

Այժմ կանգ առնենք Դիրք հերձվածոցի այն մասի վրա, որը ոչ մի առնչություն չունի Հովհան Դամասկացու գործի հետ։ Որպիսի 153 և 154 հերձվածների մասին է, որոնք իրենցից ներկայացնում են մի հետաքրքրական առասպել պավլիկյան ազանդի Հայաստանում տարածվելու մասին։ Այնտեղ մենք կարդում ենք. — «ԱՌԹԻ. Քաղաքավարական, որ է արիանարարուցս Թադէոս ոմն Բունաց աշխարհէն[2] պատահեաց պիղծ ազանդին պավլիկեանց և ոչ կարաց դարձուցանել զնոսա յազանդէն իւրեանց, հայածեաց զնոսա անդր քան զլեառն Գոգկաս[3] մեր կին մի առաջնորդ նոցա Մարէ անուն, կախարդ և կուռնդ։ Զարապարծացն բարի առնէր և բարեպարծացն պատուհաս, և զկանայսն հաստատակաց ուսուցանէր[4], և ասուրս և որոշեալ զոր մենք հաստատակաց կոչեմք — զայն ասասանալա-

[1] Տարօրինակ է, որ Սա. Մելիք-Բախշյանը չի նկատել, որ այս վկայությունը չէր կարող որևէ կերպ վերաբերվել պավլիկյաններին, որոնք իր իսկ ասելով «չէին ընդունում նաև հաղորդության և մկրտության ձևերը» (հիշ. աշ., էջ 218)։

[2] № 3081 ձեռագրում «Թադեաւոր ոմն Բունաց աշխարհէն բարեպաշտութեամբ զօրացեալ»։

[3] № 3081 ձեռագրում «անդր քան զլեառն Կուկաս արդեալական արար զի մի տեսանեն զնոսա ապդր բրիստոնէից»։

[4] № 3081 ձեռագրում «և զկանայս հաստատակաց ամենեցուն նստուցանէր և ընդ աւտարի ամուսնանալ պոռնկութիւն անուանէր և ընդ արեան բարեպաշտութիւն»։

կան անուանէր, և ինոսա հեղուլ արիւն մարդոյ բարի ասէր, և որ ուտէ և բմպէ դարիւն մարդոյ այն արդարութիւն[1]։ Եւ լաղդմանէ սատանայի տեսիլ տեսանէր և մանկունս փոդոսէր և ասէր, թէ նոցա հոգիքն դան ի տեսիլ կախարդացդ։

Հաջորդ՝ № 154 հերձվածը իրենից ներկայացնում է նախորդ պատմությունի շարունակությունը։ «ԱՆԴ. Ապա կին մի Շէթի[2] անուն,— ասում է ալնտեղ,— այնր ազանդոյն, եկեալ գկնի թուրքացն եկն ի Հայս, և Պօղ[3] ոմն լայրարատեալ գավառէն, որ աշակերտեալ էր արրոյն Եփրեմի, առնանկեաց գկինն, և իսանակեցաւ ազանդն ընդ քրիստոնէութեան[4]։ Զարեղանն Երիսատս ասէին, ոչ մեռեալ և ոչ յարուցեալ. և վասն այնորիկ ծոմանան ի կիրակէ։ Եւ եկեալ սուրբն Եփրեմ ոչ կարաց քակել գնա յազանդոյն և անէծ գնա և գնացդ[5]։

Նախ և առաջ պարզենք, թե ինչո՞ւ պավլիկյան ազանդը այս առասպելի մեջ կոչվում է նաև քաղկեդոնական, և ինչո՞ւ այդ բառը նշանակում է արյունարբու։ Անանիա Շիրակացու «Աշխարհացույցի» մեջ, որը դարեր շարունակ վերագրվում էր հայերի ամենից շատ սիրված պատմիչին՝ Մովսես Խորենացուն, գրված է հետևյալը,— «Զնեփռնա, գԱղձն, ընդ որոց մէջն իջանէ գնան Տաղիրթ, զոր Շիթմա կոչեն Տաճիկք, այսինքն արիւնարբու։ Իսկ մի այլ տեղում գրված է.— «Տաղիրթ, որ բնակ ի լերանց Սալնալ և Սանասնոյ, և իջեալ կարէ լիրերաց գնեփրկերտ և գԲդիմար, որով բաժանեցան Հոռոմք և Պարսիկք և կոչի ազգ Շիթիթմա, որ է արիւնարբուծ[6]։

Պավլիկյան շարժումը տարածված էր վերոհիշյալ տերիտորիաներում՝ արաբա-բյուզանդական սահմանի վրա և մեր ձեռագրի քաղկեդոնական անունը հավանաբար, ցույց է տալիս, թե այդ ազանդը տարածվել է Տաղիրթ գետի հոսանքի շրջանում։ Դրանից հետո կարելի է բացատրել՝ թե ինչու քաղկեդոնական ազանդը նշանակում է արյունարբուների ազանդ։ Պարզապես գետի անվան թարգմանական իմաստը տարածվել է ազանդավորների վրա, մի բան, որ առանց դրան էլ պաշտոնական եկեղեցին ազանդավորներին մեղադրում էր արյունարբվության մեջ[7]։

Ըստ այս առասպելի պավլիկյան շարժումը Հայաստանում տարածվել է Բյուզանդիայից, բյուզանդական կայսրների ազանդավորների դեմ տարած հալածանքների հետևանքով։ Տարածման ժամանակաշրջանն ևս արտացոլված է այս առասպելի մեջ «գկնի թուրքացդ։ Թուրքերի տակ հավանաբար պետք է հասկանալ արաբներին[8], որոնք իսկապես որ 7-րդ դարի կեսերին սկսեցին իրենց իշխանությունը տարածել Հայաստանի վրա։

[1] № 3681 ձեռագրում «և ասէր և որոշեալ, զոր մենք արարչական կոչեմք սա սատանայական անուանէր և ի նոսա անհնար հրամայէր հեղուլ գարիւն մարդոյ և որ ուտէ և բմպէ ասէ դմարմին և արիւն մարդոյ հաւատով անարդարութիւն»։

[2] Հենց այս անունը (ՇԷԹԻ) խոսում է Գիրք հերձվածոցի այս մասի ոչ հունական լինելու մասին։ Ինչպես հայտնի է հույները չունեն Ե հնչյունը։

[3] № 3681 ձեռագրում՝ Պաւղին։

[4] 3681 ձեռագրում «ասրնդեաց գկինն զայն նորին խրատովն և ներջաւ նորին ազանդոյն և խառնեաց զանաւրէն ազանդն ընդ քրիստոնէութեան»։

[5] Տե՛ս Միսարան, հիշ. աշխ., էջ 113։

[6] Աշխարհացույց Մովսեսի Խորենացւոյ, Վենետիկ, 1881, էջ 30։

[7] Նույն տեղում, էջ 37—38։

[8] «Աշխարհացույցի» այս վկայության մեջ պետք է հավանաբար փնտրել պավլիկյանների առաջնորդ Շէթի անվան սկզբնաձևը։ Քաղիրթ գետը, Աշխարհացույցի համաձայն, կոչվում էր նաև Շիթմա։

[9] № 3681 ձեռագրի այդ մասը անընթեռնելի է և մենք չգիտենք թե արդյոք 1313 թ. այդ ձեռագրում նույնպես «թուրքաց» էր գրված թե «տաճկաց»։

Պավլիկյանները հիշատակված են նաև Մատենադարանի երկու այլ ձեռագրերում № 2966 և 3062։ Այդ ձեռագրերի մեջ հետաքրքրող մասի բովանդակությունը նույնն է և այն հրատարակվել է Սամվել Անեցու ժամանակագրության Ա. Տեր-Միքելյանի կցած ծանոթագրություններում[1]։ Այնտեղ ասվում է. — «Կանոնք և սահմանադրութիւն ժողովոյն Աղուանից, որ եղև ի ժամանակս Եղիայի Հայոց կաթուղիկոսի, որ էր Լ.Ա. ամոռակալ ի սրբոյն Գրիգորէ։

Ի ժամանակին յորում կարգեցաւ ի քահանայապետութիւն Աղուանից Միքայէլ քահանայ խօսեցաւ ամոռակցօքն իւրովք, որք էին. Յովհաննէս Կապադակու եպիսկոպոս, Սահակ Ամարասու եպիսկոպոս, և Եղիազար Հոշոյ եպիսկոպոս, և Իսրայէլ Մեծկուանից եպիսկոպոս, և Զաքարիայ Մեծիւրենից եպիսկոպոս, և Յովակիմ Գարդմանայ եպիսկոպոս, յաղագս բարեկարգութեան աշխարհիս և ուղղափառութեան հաւատոյս։

Արդ ես Շիրոյ Ապահի-պատրիկ Գարդմանայ տէր և Աղուանից իշխան։ Վարազ-Գրիգոր պատրիկ Աղուանից սպարապետ, Բարի Շահրիներոդեան, Զատմիր ի Վարազ Գուրդաքեան, Թեոդորոս Վատամ Յարեմանեան, Թոսատմ ի Վաչագան ի Վարազաքեան Յունատահեան, Վահան ի Վարազվահանեան, Սմբատ ի Փարոլեան, Մահումատ ի Ղանքարեան, Գրիգոր ի Թահատեան, Պատրիկ ի Բամդիտեան, Արևքո ի Վարոքեան, Շիրոյ ի Մերդանշահեան, Վարդիշ ի Թամդիկան հիւպատոս, ՁԸ թուականութեանս Հայոց այսպէս կանոնեցաք, թէ յորժամ դուք ձեռնարկեք յաղագս քաղկեդոնական ազանդոյն, և կամ Մայրազոմեցոյն, եթէ վասն պայլի կենաց[2], և թէ վասն խաղն ամուսնութեան, և թէ դինչ և իցէ ոչ ոք կարէ ելանել ըստ ձեր հրամանէ, և եթէ ոք ելանէ յԱստուծոյ դատապարտեալ եղիցի, և դուք իշխան լիջիք ըստ կամաց ձերոց դատել և ոք լիշխանաց չունի իշխանութիւն օգնել, և ի պատմանիս, զոր կարգեցաք հաստատուն կացցուք։

Եւ կնքեցի զգիրս ես Շիրոյ Ապահի պատրիկ Գարդմանից տէր և Աղուանից իշխան հանդերձ ամենայն ազատօքն»։

Կասկածի ենթակա չէ, որ Հայոց ՁԸ թվականը (մ. թ. 639 թ.), որ հիշատակված է այս փաստաթղթում, սխալ է, որովհետև այդ ժողովը նույն այդ փաստաթղթի համաձայն տեղի է ունեցել Աղվանից Միքայել կաթողիկոսի (702—737) և Հայոց Եղիա կաթողիկոսի (703—747) ժամանակ։ Չնայած այդ բոլորին, սա պավլիկյանների ամենահին հիշատակությունն է։ Եւ նախորդում է Հովհան Օձնեցու (717—728) «Ընդդէմ Պաւղիկեանցն» ճառին։

---

[1] Սամուէլի Քահանայի Անեցւոյ — Հաւաքմունք ի զրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1893, էջ 286։ Այս փաստաթղթի վրա մեր ուշադրությունն է հրավիրել պատմական գիտությունների թեկնածու Ա. Մնացականյանը, որին հայտնում ենք մեր խորին շնորհակալությունը։

[2] Երկու ձեռագրերում էլ բառանջատում կա (պայլի կենաց և ոչ պայլիկենաց) Մատենադարանի № 793 ձեռագրում Դվինի 719 թ. ժողովի կանոնների բովանդակության մեջ ԼԲ կանոնի կապակցությամբ գրված է «Վասն չարաղանդ մծղնէից որ են պայլ ի կենանք (եր. 129ա)։ Սա արդյոք մեզ չի՞ տալիս բանալի հասկանալու համար թե ինչու պայլիկենաց բառի սեռական հոլովը առանձին տեղերում հանդես է գալիս ոչ թե ճիշտ՝ պայլիկենաց ձևով, այլ՝ պայլիկանց։ Կենաց բառի սեռական հոլովը կենաց է։

[3] Մատենադարանի № 2966 ձեռագիր, եր 120ա — բ, ձեռագիր № 3062, եր 251—252։ Սամուէլի Քահանայի Անեցւոյ — Հաւաքմունք ի զրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1893, էջ 286 (ծան. 28)։